ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- սեպտեմբերի 2020 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ 100 ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հուլիսի 10-ի №242Ա որոշմամբ համաձայնություն է տրվել «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 100 տոկոս բաժնետոմսերի սեփականատեր «ՎԵՈՆ» ընկերությունների խմբում ընդգրկված «Վիմպել-Կոմունիկացիի» հանրային բաժնետիրական ընկերությանը պատկանող 100 տոկոս բաժնետոմսերը «ԹԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն (այսուհետ՝ «ԹԻՄ» ՍՊԸ) օտարելուն,

բ) որ Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 29-ի №258Ա որոշմամբ համաձայնություն է տրվել Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելուց հետո «ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն,

գ) Ընկերության 2020 թվականի օգոստոսի 10-ի №227/20-И11 գրությունը, որի համաձայն՝ «ԹԻՄ» ՍՊԸ-ն այնուհետև բանակցություններ է վարել և պայմանավորվածություն է ձեռք բերել նաև «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության հետ, ըստ որի՝ վերջինիս կողմից կամ կտրամադրվի Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների 50 տոկոսը (մնացած 50 տոկոսը «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից համաֆինանսավորմամբ), կամ գործարքը կֆինանսավորվի ամբողջ ծավալով, իսկ «ԹԻՄ» ՍՊԸ-ի և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված վարկային պայմանագրով դրանք

վերադարձնելու «ԹԻՄ» ՍՊԸ-ի պարտավորությունների կատարումն ապահովված կլինի նշված բաժնետոմսերի գրավով, որի կապակցությամբ Ընկերությունը խնդրում է ի լրումն Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 29-ի №258Ա որոշմամբ տրված համաձայնության, համաձայնություն տալ նաև Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերը «ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն,

դ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի օգոստոսի 26-ի №01/11.1/4505-2020 գրությունը, որով նախարարությունը չի առարկում Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը «ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելուց հետո «ԹԻՄ» ՍՊԸ-ի կողմից «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:
3. Ընկերությանը՝ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2020թ.